

ՅԱԿԵԼՈՒԱԾ „ԱՐԱՐԱՏ“-Ի 1902 Թ. ՅՈՒՆՈՒԱՐ

ՊԵՏՐՈՍ ՍԻՒՆԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1. Պետրոսը եպիսկոպոսութիւն արաւ տասը տարի 547—556 թուերին (տես Սիսակ. 20): Պետրոսի մասին մեր ունեցած գլխաւոր աղբիւրն է Օրբելեան Ստ. եպիսկոպոսը: Պետրոսին ժամանակակից աղբիւրից ունինք տեղեկութիւն, որ նա՝ յամենայն դէպս՝ Սիւնեաց եպիսկոպոս էր Պարսից Խոսրով արքայից արքայի քսան և չորսերորդ տարին, այն է փրկչական 554 թուին: Նա կենդանի էր նաև՝ Խոսրովի քսան և հինգերորդ տարին, այն է 555—6 թուին և Ներսէս Բ.-ի նեստորականաց դէմ արած ժողովներին մասնակցում էր: (Տես Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901. էջ 70—79, մասնաւորապէս էջ 72 և 76, նաև «Արարատ» 1901, էջ 470, իմ «Գրիգոր Մանածիհր Ռաժիկը»): Յովհաննէս կաթողիկոսի թղթում, գրուած Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսին, Պետրոսն արդէն «երանելի» է, այսինքն վախճանուած (Գիրք Թղթ. էջ 79):

Պետրոսի գրուածքներից մեր ձեռքն հասել են միայն պատառիկներ: Նրա պատմական գրուածքի մասին յիշատակութիւն է անում Օրբելեան և բերում է քաղուածքներ: Պետրոս Սիւնեցուց քաղուածքներ կան և Աղուանից պատմութեան մէջ (Զարբ. Հին դպ. 1897, 409—413): Այս բոլորն արդէն տպագրութեամբ յայտնի են: Ներքեւում մենք հրատարակում ենք Պետրոսի մնացած անտիպ գրուածքները, այն չափով որ ես ունիմ ձեռքիս տակ մեր մատենադարանի ձեռագրերից: Իւրաքանչիւր գրութեան գլխին նշանակում եմ այն ձեռագիրը կամ ձեռագրերը,

որոնցից կատարում եմ հրատարակութիւնս, համառօտ տեղեկութիւններով ձեռագրերի մասին:

2. Առաջին տեղը տալիս ենք Պետրոսի Աստուածածնայ Գովեստին, որ կարգացւում էր Փրկչի Ծննդեան տօներին: Վեցերորդ դարում ինչպէս և դեռ շատ յետոյ մեր եկեղեցին չունէր և ոչ մի յատուկ տօն Աստուածածնայ: Աւետեաց, Վերափոխման, Գիւտ տփոյ ևլն. տօները մտել են մեր մէջ շատ յետոյ՝ օտար անվաւերական գրութիւնների թարգմանութեանց ազդեցութեամբ, յոյն՝ և աւելի ուշ նաև լատին՝ եկեղեցիների օրինակով և հետևութեամբ: Այս ներբողեանի հնագոյն և լաւագոյն օրինակն է G, գրուած փրկչ. 1201 թուին: Զ-երը բաժանւում են երկու խմբի. առաջին խումբը GH պահել է անաղարտ հին գրութիւնը, մինչդեռ երկրորդ խումբը՝ KW՝ անում է կամայական փոփոխութիւններ, կրճատումներ, յաւելումներ ևլն.: Երկրորդ խմբից շատ քիչ բան է առնուած հրատարակութեանս մէջ: Նշանակում ենք Սուրբ Գրքից վկայութիւնները և ուրիշ աղբիւրներ, օրինակ Պատարագամատոյց ևլն., ամեն անգամ երբ այդ նկատել ենք:

3. Երկրորդ տեղը դնում ենք Աղուանից Վաչագանի իշխանի կամ Թագաւորի (=արքայ) հարցումները և Պետրոսի Պատասխանները, թուով 24: Պէտք է ուշադրութեան առնել որ Պետրոսին ժամանակակից Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսն էլ գրուածքներ ունի նոյն Վաչագանի խնդրանքով: Պետրոս Սիւնեցու հետ եկեղեց. ժողովներում և թղթերում յիշուում է Մերշապուհ Տարօնի և Մամիկոնէից եպիսկոպոսը՝ որին յաջորդել է Մամիկոնէից Աբրահամ եպիսկոպոսը (Գիրք Թղթ. էջ 73, 76, 78): Զարբ.-ը կասկած է յարուցանում այս գրուածքի վաւերականութեան մասին՝ «Եթէ յերաւի Պետրոսի երկասիրութիւնը խեղենք՝ օտարի ձեռք խառնուած կերևնայ, որոնք իրեն լուսաւորեալ մտացը հարազատ ծնունդքը չեն կրնար ըլլալ, որ թէ գրութեան կերպէն և թէ ոճէն կը յայտնուի» (Հին Դպ. 410): Այս ընդհանուր խօսքերը հաղիւ թէ որ և է ապացոյցի զօրութիւն ունենան: Թէ Պետ-

րոս Սիւնեցին ինչպէս և իւր ժամանակակից կաթողիկոսը հակաքաղկեդոնեաններ էին և հակառակ երկաբնակութեան, — և այս է մեր Հարցումների նիւթը, — այդ անկասկած է: Յակօրիկների յիշատակութիւնը (Հարց. ԺԱ) վեցերորդ դարի կիսում անտեղի չէ, թէև կանուխ յիշատակութիւններից մէկը: «Երկու կամքի» յիշատակութիւնը (Հարց. ԺԸ, ԺԹ) չէ իբրև երկաբնակների կողմից ընդունուած վարդապետութեան յիշատակութիւն, այլ իբրև անհնարաւորութիւն, իբրև մի բան, որ նոյն իսկ երկու բնութիւն ընդունողը չը պէտք է ընդունէ, ուրեմն այս կէտն էլ չունի որ և է անտեղութիւն վեցերորդ դարի կիսի համար: Թողնելով մի կողմ աւելի մանրամասնութեանց իջնելը՝ դառնանք այս գրուածքի աղբիւրներին, որչափ որ մեզ յաջողուել է գտնել և որոշել այդ աղբիւրները: Դրուածքս ծայրէ ծայր ներշնչուած է Արիստոտէլեան փիլիսոփայութեամբ, մասնաւորապէս Դաւիթ Անյաղթի անուամբ մեզ հասած գրուածքներով: Դաւթի Սահմանաց գիրքը, Հինգ Առածները (Հարց. Ա, Թ), բայց մասնաւորապէս Պորփիրի վերլուծութիւնը (Հարց. ԺԸ, Ի, ԻԱ) ծանօթ են այս գրուածքի հեղինակին: Բաւականանանք այստեղ միայն մի օրինակով, միւս նման կէտերը տեսնել ծանօթութեանց մէջ.

Վերլուծ. Պորփիրի

ՎԵՆԵՏ. 1833, էջ 322.

ՊԵՏՐՈՍ ՍԻՍՆԵԱՅ

Հարց ԺԸ.

«Զորք են որ ներանիւթ են... խոստովանեալ ի խոստովանելոյ, երկրայ յերկրայէ, խոստովանեալ յերկրայէ, երկրայ ի խոստովանելոյ»:

«Ամենայն նիւթեալքն երեքկին [= գլին — գլին — չորեքկին] են, [երկրայ ի խոստովանելոյ] * և երկրայ յերկրայէ, խոստովանեալ յերկրայէ, խոստովանեալ ի խոստովանելոյ»:

Ուրեմն Դաւիթ Անյաղթի անուամբ մեզ հասած գրութիւնները — հայ թարգմանութեամբ — անպայման կանուխ են Վաչագանի Հարցումներից: Եթէ այս Հարցումն

* Փակագծուածք մեր 2-րի գլխի բաց բաղաձն է:

ները Պետրոս Սիւնեցու վաւերական դրութիւնը լինին, Անյաղթի դործերի հայ թարգմանութիւնը պէտք է բարձրացնել մինչև վեցերորդ դարի առաջին կէսը: Դաւիթ Հարքացու ինդրով երկար զբաղուած լինելով՝ Պետրոսի այս վաւերական կամ անվաւեր դրուածքը մեզ հետաքրքրեց և այս հետաքրքրութեան հետևանքն է Պետ. Սիւնեցու մնացորդների հրատարակութիւնը: Դաւիթ Հարքացուն մենք վերադառնալու ենք, ուստի այս մասին առայժմ այսչափ:

4. Աւելի ծանրակշիռ են Հարցմանց ժամանակը որոշելու համար Կիւրեղ Աղեքսանդրացու Պարապմանց և Գրիգոր Նիւսացու Կազմութեան (=Տեսութիւն Մարդոյն Կազմութեան) և Բնութեան (=Նեմեսիոսի Յաղագս Բնութեան մարդոյ) գրքերից փոխառութիւնները: Այդ երեք գրքերն էլ Ստեփանոս Սիւնեցու և Դաւիթ Հիւսպատի թարգմանութիւններն են: Պարապմանց գիրքը թարգմանուել է 714 Փրկչ. թուին, Նիւսացու Բնութեանը (=Նեմեսիոս) 716-ին կամ 717-ին, բուն Նիւսացին (=Տեսութիւն Մարդոյն Կազմութեան) առանց յիշատակարանի, բայց կարծուով է սովորաբար թարգմանուած նոյն թարգմանիչներից ութերորդ դարի սկզբին (տես Հայկ. Բառ. Յառաջ., Զարբ. թարգ. Նախն. էջ 371., Տաշ. Մանր Ուսում. 4—13), թէև կարօտ յատուկ ուսումնասիրութեան: Նոյն թարգմանիչներինն է և Դիոնեսիոս Արիսպագացին, Փրկչ. 712-ին (Փիլիպպոսի երկրորդ տարին, տես Թարգ. Նախն. էջ 388): Այսպիսով Ստեփ. Սիւնեցու և Դաւիթ Հիւսպատի թարգմանութեանց մեզ հասած թուականներն են 712—717:

Վաչագանի Հարցումները Կիւրեղ Աղեքսանդրացուց վկայութիւն են բերում Ա. և Ժ. Հ-երում: «Կիւրեղ Աղեքսանդրացի համառաւութեամբ սահմանեաց զՀոգին սուրբ ընդդէմ ամբարշտին Մակեդոնի» (Ա.)—«Եւ զայս Կիւրեղ Աղեքսանդրացի ուսուցանէ, ի Պարապմանցն ասէ՝ Քրիստոսդ անուն ոչ սահման է և ոչ սահմանի զաւրութիւն»: Այս հատուածը Ստեփ. Սիւնեցու թարգմանութեամբ հե-

տեւեալն է. «Բրիստոսդ անուն ոչ սահմանի զօրութիւն ունի և ոչ զուրուք զէութիւն». Գիրք Պարապմանց Ա. Ինչպէս տեսնում ենք կայ նմանութիւն, բայց ոչ բառացի նոյնութիւն: Ենթադրել թէ մեր նախնիք միայն Ստեփ. Սիւնեցու թարգմանութեամբ ծանօթացան Պարապմանց գրքին մեզ անհետքութեութիւն է թւում: Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսը յունագէտ էր, «իմաստասէր», «քերթող» և հարկաւ օգտւում էր Կիւրղի յոյն բնագրից: Ոչ յունագէտ հայերն էլ ծանօթ էին Ստ. Սիւնեցուց առաջ Կիւրղի ճառերից և կրօնական վիճական գրուածքներից քաղուածքների: Յատկապէս Կիւրղի Պարապմանց գրքից քաղուածքներ ենք գտնում Տիմոթէոս Կուղի երկասիրութեան հայ թարգմանութեան մէջ (Ձ. № 1988, երկաթագիր, մագաղաթ, մասնաւորապէս էջ 101^ա «Նորին ի Պարապմանցն»): Տիմոթէոսի հայ թարգմանութիւնը Ստ. Սիւնեցուց շատ առաջ էր և գործ է ածւում արդէն Հայոց և Վրաց եկեղեց. վէճերի ժամանակ, (տես Գիրք Թղթ. էջ 126, 140, նաև 101, 103 ևլն.): Ժէ Հարցման մէջ կարծես թէ ակնարկութիւն է լինում Նիւսացու գրքերին՝ «Եւ վասն մարդոյն ուսիր ի մարդոյն կազմութեան և բնութեան, զի առանասունս հաղորդին և առ հրեշտակս նոյնպէս»:

Շատ աւելի կասկածելի են Ը Հարցման մի երկու ասացուածները, որ գրեթէ նոյնութեամբ առնուած են Նիւսացուց.

«Զի քուն է ախտ անդողդոջ խաղաղանալ ի մարմնի զգայութեանցն». Հարց. Վաչագանի, Ը:

«Եւ այսպիսի ախտ քուն է. անդողդոջ խաղաղացեալ ի մարմնի զգայութեանց (այլ ընր. ի մարմնին զգայութեանն». Նիւսաց. Կազմ. Ձ. 456, էջ 144 ա, տ. և Հայկ. Բառ. «անդողդոջ»:

«Եւ բարկութիւն եռանդն է զսրտիւն արեանն ի վերածխութենէ մաղձոյ». Հարց. Վաչ. Ը:

«Արտմտութիւն է եռանդն չուրջ զսրտիւն արեանն ի վերածխութենէ մաղձոյ կամ ի պղտորմանէ եղեար». Նիւս. Բն. (=Նեմեսիոս), Ձ. 456, էջ 70 բ, տ. և ՀԲ. «վերածխութիւն»:

Այս երկու օրինակն՝ իմ կարծիքով՝ բոլորովին բաւական է խախտելու համար Վաչագանի Հարցմանց վաւերականութիւնը: Ուրեմն և ստիպուած ենք համոզուել, որ Վաչագանի Հարցումները նեմեսիոսի թարգմանութիւնից, այն է 716 կամ 717 թուից, յետոյ են գրուած, բայց՝ յամենայն դէպս 981 թուականից առաջ, որովհետեւ այդ թուականիցն է № 102 ձեռագիրը, մեր միակ օրինակը, որից անում եմ այս հրատարակութիւնը:

Հարցմանց միւս աղբիւրները՝ Ապողինար, Պրոկղ, Գրիգոր Աստուածաբան ևլն., իբրեւ հնագոյն թարգմանութիւններ, որոնցից կարող էին օգտուիլ և Պետրոս Սիւնեցին և կեղծ-Պետրոսը, գրութեանս ժամանակը և վաւերականութիւնը որոշելու համար նշանակութիւն չունին: Նոյնը պէտք է ասել և աւելի նորագոյն գրողների համար, որոնք նոյն իսկ մեր ձեռագրից աւելի ուշ օգտուում են և քաղում Վաչագանի Հարցումներից, ինչպէս օրինակ Վանականը (Հ. Թ.) և Վահրամը (Հ. Ը.):

5. Այսու ամենայնիւ Վաչագանի Հարցումները պահում են իրենց նշանակութիւնը իբրեւ անվաւերագիր, ամենայն հաւանականութեամբ ծագած հայ և աղուան կրօնական վէճերի ժամանակ, 8—10-դ. դարում, առանձնայատուկ ոճով և բառերով («միատակ»*, «կոռն» ևլն.) և իբրեւ մեղ ծանօթ հնագոյն գրութիւններից մէկը, ամբողջովին տողորուած «Դաւիթ Անյաղթով»: Դաւիթ Անյաղթի հնագոյն յիշատակութիւնը յականէ յանուանէ՝ Մազխատրոսինն է և Ստ. Ասողիկինը: Կանիբիրի ընդարձակ ուսումնասիրութեան մէջ (Anecdota Oxoniensia, Clas. Ser. I, part VI. A collation with the ancient arm. Version of the Greek text of Aristotle's Categories, by Fr. Corn. Conybeare. Oxford, 1892. Տաշեանի հայ. թարգմանութիւնը «Ամս. Հանդէս» 1893) Ստ. Սիւնեցուց, ութերորդ դարից, բերուած վկայութիւնը, որի մէջ իբր թէ «բացորոշ յիշատակութիւն մը կայ Դաւթի Սահմանաց» («Հանդէս

* Հմմտ. ժողովրդական՝ մէտակ, եւ գրաբար՝ երկսակէն:

Ամս.» 1893, էջ 51) լսի թիւրիմացութեան արդիւնք է։ Այդ վկայութիւնը Կանխիրն առնում է Զարբ.-ի Հին Դպրութիւնից (1886, էջ 301) իբրեւ Ստ. Սիւնեցու (ուր թերորդ դար) մի հատուած, որն ինձ մեծ նեղութիւն պատճառեց։ Ինչ որ յայտնի է Ստ. Սիւնեցուց և մեզ հասել է Զ-երում բոլորը թերթելով ինձ չյաջողուեց գլտնել այդ հատուածը և վերջապէս կասկածելով որ այդ տողերը կարող են լինել Օրբելեանին, որ նոյնպէս Ստեփանոս է կոչւում և Սիւնեցի, և վենետիկեան յատուկ սովորութեամբ առանց աղբիւրի ցուցման կամ ճիշդ ցուցման մէջ են բերուած, գիմեցի Օրբելեանին։ Եւ յիշուի Օրբելեանն ունի այդ հատուածը տառացի։

Կոնիքիւր, Տաւեանի քարգմանութեամբ, «Հանդ. Ամս.»
1893, էջ 51.

Տեառն Ասեփանցոսի Սիւնեաց
նախագան Արնի եպիսի՝ Հա-
կանառութիւն Բնդդեմ Երկա-
բնակաց։ Շարադրեալ ի բուին
Հայոց ԶԾԱ, ի կարողիկոսու-
թեան Գրիգորի Անաւարդեցոյ.
սպագ. էջ 20.

«Այս միևնոյն հեղինակին [= Ստ. Սիւնեցի, ուր թերորդ դար] քով բացօրոյ յիշատակութիւն մը կայ Դաւթի Սահմանաց։ Այս տեղն է այսպէս. «Արդ թէ զինչ է բնութիւնս մեր, յատկապէս ուսաք ի Դաւթայ հռամեծէ. այն՝ որ ընդդէմ Ակադեմայցն և Պիւռհոնացեացն զիմակայէ քաջապէս, որք ջանային եղծանել զգոյութիւն իմաստութեան»։

«Արդ թէ զինչ է բնութիւնս մեր՝ յատկապէս ուսաք ի Դաւթայ հռամեծէ. այն որ ընդդէմ ակադիմեանցն և պիւռհոնացեացն զիմակայէ քաջապէս. որք ջանացին եղծանել զգոյութիւն իմաստութեանն»։

(Այս տպագիրը չունի թուական, տես այս մասին Զարբ. Հայկ. Մատենագիտութիւն, 1883, էջ 634)։

Հետեւութիւնը բացատրութեան կարօտ չէ։

6. Պետրոս Սիւնեցու երրորդ և չորրորդ դրութիւններին ունիմ միայն հատուածներ։ Առաջինը Յաղագս Հաւատոյ վերտառութեամբ, որ երեք տիեզերական ժողով-

ների, և Եփեսոսի երկրորդ ու Քաղկեդոնի ժողովների համառօտ պատմութիւնն է։ Այստեղ փոքր ինչ կասկածի տեղիք է տալիս այն, որ Պետրոսը Սահակ Պարթևին կենդանի է համարում Դէոսկորոսի նախադահութեամբ Եփեսոսում եղած ժողովի և Քաղկեդոնի ժողովի ժամանակ։ Սահակ Պարթևի յիշատակութիւնը այս դէպքում թերևս մեկնուի այն իրողութեամբ, որ Սահակի մահից յետոյ մինչև Քաղկեդոնի ժողովը Հայաստանում չկար օրինաւոր կաթողիկոս, չհաշուելով ասորի նշանակովի պաշտօնեաները, և հայրապետական գահը կառավարում էր տեղակալներով։ Իսկ սովորութեամբ, ինչպէս որ է նաև մեր օրերում, Հայրապետական գահի թափուր ժամանակ, օրինակ պատարագին, յիշատակւում է հանդուցեալ կաթողիկոսը, մինչև նորի ընտրուիլը։

Պետրոսի չորրորդ դրութիւնը Ծննդեան Ճառ է, որից ունիմ վեց փոքրիկ հատուածիկներ, որոնցից առաջին չորսը տասներորդ դարի ձեռագրից և ութերորդ դարի մի ժողովածուից, որ պատկանում է Ստեփանոս Իմաստասիրի [ամենայն հաւանականութեամբ Սիւնեցին] գրչին։ Այդ Ստ. Իմաստասիրի մասին առաջին պատեհ առթիւ։

Գարուս Տէր-Մկրտչեան

Յունուար 1902.

